


Solo cò.
A-83
18740



ՄԵՍՐՈՐԴ ՄԱՇՏՈՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՎԱՆ


ՇԱՐԱԿԱՆԱԵՐ

Զայնի և դաշնամուրի համար

Ներդաշնակումը Գևորգ Արմենյանի



«Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1971



0448/

МЕСРОП МАШТОЦ
СТАРИННЫЕ ПЕСНИ
(ШАРАКАНЫ)

Для голоса с сопровождением фортепиано,
гармонизация

ГЕВОРКА АРМЕНЯНА

(На армянском языке)

Издательство "Айастан"

Ереван, 1971

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայ ժողովրդի մեծ երախտավոր Մեսրոպ Մաշտոցը նշանակալի վաստակ ունի նաև հայ պրոֆեսիոնալ երգարվեստի ծագման ու զարգացման գործում. հանգամանք, որն այժմ արդեն, հիմնականում, պարզաբանված կարելի է համարել հայագիտության մեջ:

Ասենք՝ եթե Մաշտոցը բանաստեղծ-երաժիշտ էլ չլիներ, դարձյալ անգնահատելի կլիներ հայ ազգային երաժշտությանը նրա մատուցած խոշոր ծառայությունը: Որովհետև գրական լեզու ստեղծելով, նա հայկ սկան ինքնուրույն պրոֆեսիոնալ երգարվեստի հիմքը դրեց, քանի որ անհնարին է պրոֆեսիոնալ երգարվեստի ծագումն իսկ, գրական լեզվից զուրկ մի ժողովրդի կյանքում: Զխոսելով այն մասին, թե Մաշտոցի ստեղծած այբուբենի օգնությամբ տարբեր երգերի գրական խոսքերի հաստատագրումը մի ժամանակ, երբ խոսքի ու երաժշտության կապերն այնպիսին էին, որ երգահաններն ամեն կերպ աշխատում էին մեղեդիում հստակ «երևակել» ոտանավորի չափն ու կշռույթը, բանաստեղծական տան կառուցվածքը, գրական նախադասության քերականական շեշտերը և անգամ կետադրությունը, մեծապես նպաստում էր նաև մեղեդիների, նրանց ծավալի ու ձևի, ուղծական կմախքը, նույնիսկ ելևէջի գլխավոր կետերի անխաթար հարատևմանը:

Սակայն, հայկական միջնադարյան ձեռագրերում, պատմիչների աշխատություններում և այլ աղբյուրներում պահպանված մի ամբողջ շարք տվյալների հավաքումը, դասավորումն ու քննական ուսումնասիրությունը բերում են համոզման, որ Մաշտոցը՝ Սահակ Պարթևի նման՝ լուրջ մասնակցություն է բերել հայոց ծայնեղանակների կարգավորման գործին, դպրոցներում ուսուցանելով այդ ծայնեղանակները՝ դրել է երգչային ծայնի մշակման ու հայ երգի ուսուցման արվեստի առաջին հիմնաքարերը, և հայկական պրոֆեսիոնալ երգարվեստի ծագման շրջանում հանդես եկել որպես ինքնուրույն երգերի բանաստեղծ-երաժիշտ հեղինակ (տես մեր հոդվածը՝ Մեսրոպ Մաշտոցն ու հայոց հոգևոր երգարվեստը, «Բանբեր Մատենադարանի», № 7, Երևան, 1964, էջ 161–208):

Ղրանք պահպանված են միջնադարյան գրչագիր խազավորված թե հնատիպ տպագիր թե ծայնագրյալ շարակնոցների «Շարականք պահոց» բաժիններում (որովհետև սկզբնապես նախատեսված են եղել պահոց օրերին կատարելու համար՝ որպես «ապաշխարության երգեր»), ու ներկայացնելով հայ պրոֆեսիոնալ երգարվեստի տառացիորեն առաջին շերտերից մեկը, ունեն, նախ և առաջ, նանաչողական հսկա արժեք:

Հայկական հոգևոր ինքնուրույն առաջին երգերը (մանավանդ միաձայն խմբերգի կառուցվածք ունեցողները, ինչպիսիք են Մաշտոցի ստեղծագործությունները), իրենց ծնունդով կապված են սաղմոսներին ու դրա համար էլ սաղմոսատիպ են, այսինքն՝ վանկային ոճի: Բայց, սաղմոսատիպ լինելով հանդերձ, ղրանք, այնուամենայնիվ, սաղմոսներ չեն, այլ երգեր, որոնց մեջ սկզբից ևեթ առկա է եղել հետագայում մեծ զարգացում ապրելու և վերջնականապես արմատավորվելու ըն-

դունակ երգային սկզբունքը (երգայնությունը): Դա ձեռք բերելու համար պրոֆեսիոնալ երգարվեստի մեր առաջին մշակներն իսկ դիմել են մի շարք նոր արտահայտչամիջոցների, որոնք հանգում են հիմնականում, հետևյալին: Ի տարբերություն ավանդական սաղմոսների՝ ինքնուրույն նորաստեղծ երգում հրաժարվել գրական խոսքի անխտիր ամեն մեկ վանկը միևնույն ուժով «ոգելու» փորձից (տարբերելով առավել ուժեղ ու նվազ ուժեղ արտասանվելիք վանկերը), խորացնել մեղեդիի ելևէջային կորագծի ամպլիտուդը (համաձայն գրական խոսքի հուզական բովանդակության), և վերջապես, եղանակի երգայնությունը, այսինքն անբռնազբոս, հոսունությունը ապահովել՝ հայկական ժողովրդական երգի ծավալման այնքան հատուկ՝ մեղեդիական բնորոշ դարձվածքների տարբերակված (վարիացիոն զարգացման ենթարկված) կրկնությունների և մոտիվների շլթայման միջոցով: Զննելով Մաշտոցի հորինած երգերն իրենց ամբողջության մեջ, տեսնում ենք, որ նրանցում հեղինակը հետևողական ջանքերով ի վերջո հասնում է վերը նշված սկզբունքների վարպետ կիրառման (V դարի չափանիշով): Նշանակում է, մաշտոցյան երգերը եղել են մեր պրոֆեսիոնալ երգարվեստի առաջին դասական նմուշներից, և դրանում պետք է տեսնել անցյալի հայկական երաժշտության զարգացման մեջ այդ երգերի խաղացած դերի պատմական խոշոր նշանակությունը:

Սակայն, մաշտոցյան երգերը մեզ համար ունեն ոչ միայն պատմական նշանակություն: Դրանք իրենց բովանդակությամբ այսօր էլ առնչվում են մարդասիրական, ժողովրդասիրական բարձր գաղափարների հետ, և իրենց գեղարվեստական արժանիքներով այսօր էլ ներգործում են մեզ վրա:

Գաղափարական բովանդակության առումով Մաշտոցն իր երգերում նույնիսկ տարերայնորեն հաղթահարել է դրանց պաշտամունքային-կիրառական բնույթով ենթադրված սահմանափակումները, ու մտածող արվեստագետի ներքին թելադրանքով բարձրացել ապաշխարության խորհուրդի ընդհանրացման աստիճանին, փաստորեն արտահայտելով՝ «զղջման» թե «քավումի», «ինքնախարազանման» թե «ինքնաքննադատության» միջոցով անցյալից մաքրվելու, վերածնվելու և ապագային նորովի նայելու մարդկային հավերժական ձգտումը:

Ինչ վերաբերում է մաշտոցյան երգերի գեղարվեստական արժանիքներին, ապա շատ բան կարելի էր ասել դրանց կառուցվածքային մի շարք արտահայտիչ բարեմասնությունների, ինչպես և փոքր ծավալի պարզ, զուսպ, լակոնական հնավուրց ձևերի հետևում թաքնված խոր հուզականության, կենդանի շունչի ու անմիջականության մասին: Հակիրճ լինելու համար նշենք միայն, թե ինչպես ընդհանուր առմամբ միևնույն զղջական նկարագրի ոտանավորները զուգորդվելով տարբեր տիպի եղանակների հետ, ձեռք են բերում մերթ խստաշունչ ասկետական («Տէր, որի մէջ լերինն») և մերթ աղաչական մի երանգ («Յամենայն ժամ»), մերթ զգացմունքների սրտաբաց զեղման («Բազում են քո զըթութիւնքըդ») և մերթ հանդիսավոր մի բնույթ («Ողորմեա ինձ Աստուած: Ի լըսել ըզձայն փողոյն»):

Մաշտոցյան երգերը երեքական տնից բաղկացած 200 ոտանավորներ են, որոնց մեղեդիները ծավալվում են հայկական ույթ ձայնեղանակներում: V—VIII դարերում դրանք կոչվել են «կցուրդներ», սաղմոսներին կցվող ինքնուրույն հավելվածների իմաստով: VIII հարյուրամյակում այդ երգերը խմբավորվում են ույթ շարքերի մեջ, ըստ-ույթ ձայնեղանակների վերակարգավորված դրության, և ստանում «կանոնի» ժանրի բաղկացուցիչների անվանակոչությունները («Հարց», «Գործք», «Ողորմեա», «Տէր յերկնից» և այլն): Սկսած XII դարից դրանք նոր ու ընդհանուր մի եզրով անվանվում են «շարականներ»:

Մաշտոցյան երգերի մի զգալի մասը մեզ հասել է հետամուտ ակնհայտնի փոփոխություններով: Բայց այդ երգերի մեջ տարբերվում են և մի շարք նմուշներ, որոնք կրած լինելով լոկ թեթևակի ու մասնակի փոփոխություններ, պահպանել են

իրենց ռեական հիմնական առանձնահատկություններն ու տեխնիկա-գեղարվեստական սկզբնական ընդհանուր մակարդակը: Այդ կարգի երգերից ութն են, որ ներկայացված են այստեղ, գրական խոսքերի կառուցվածքի, ձայնեղանակային նշումների նշտության և մեղեդիական ընդհանուր հյուսվածքի (ֆակտուրայի) վստահելիության տեսակետներով: Մի անգամ ևս ստուգված լինելով նաև խազավոր ձեռագրերի ընծեռած տվյալների հիման վրա (տես Մատենադարան, ձեռ. № 1576. Դրագարկ, 1328 թ., էջ 57բ և 59ա, բ. 69բ. 71ա, 79ա, 90ա և 98ա):

Ավագ, միջին ու կրտսեր սերունդների մեր ճանաչված կոմպոզիտորները վաղուց է, ինչ չթուլացող հետաքրքրությամբ են հետևում հայոց հին ու միջնադարյան երգ-երաժշտության հիանալի ավանդույթների և միջազգային նշանակություն ունեցող երևույթների լուսաբանության աշխատանքներին, պարզ գիտակցելով, որ այդ աշխատանքների հիմնական նպատակներից մեկն էլ ուրիշ բան չէ, եթե ոչ՝ ըստ էության իմաստավորել ազգային երաժշտական մշակույթի զարգացման ժամանակակից բարձր մակարդակը, վեր հանելով նրա պատմական հարուստ հետնախորքը (ֆոնը):

Հիշյալ կոմպոզիտորներից մասնավորապես Գևորգ Արմենյանը, ներկա աշխատությամբ՝ մաշտոցյան ութ երգերի անփոփոխ պահպանված եղանակներին ազուցանելով պատշաճ ներդաշնակում, դրանց տալիս է համերգային կյանքի ուղեգիր:

Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ

Տէր, որ ի մէջ Լերիւն՝ ԱզգերԱնՅոռներ

Խոսք և երաժշտութիւն ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ

Զափազօր

mf *f*

Տէր, որ ի մէջ Լե -

-րիցն աղ-բե-րա - ցու - ցեր ըզ ջուրն ի վի - մէն:

mf

Տէր, ի սըր-տէ իմ - մէ հաց ինձ ար -

- տա - սուս ա - պաշխար-ու - թեան:

mf
 ջի կե - ցից եկ ա - պաշ - խար - ու - թեամբ ապ - րե - ցայց ի հան -

դեր - ձեալ . քոց դա - տաս-տա - ցաց:

ՎԵՏԱՆԳԻՄ Ի ԲԱԶՄՈՒԹԵՆԷ ՄԵՂԱՅ ԻՄՈՅ

Չափավոր

mf

Վը-տան - գիմ ի բազ-մու-թե - նե

մե - ղաց ի - մոց.

աստը - ւած խա - ղա - ղու-թեան օգ - նեա

ի նձ:

mf

Ա - լե - կո - ծիմ հող - մով ա - նօ -

- րէ-նու-թեան ի - մոյ. թա-գա - տրիսա - ղա - ղու-թեան օգ - նեա ինձ:

mf
ի խո - րըս մե - ղաց ծո - վու

տա - րա - թե-րեալ ծը-փիմ. Գա-ւա-պետ բա-րի փըր - կեա զիս:

Ի ՆԵՂՈՒԹԵԱՆ ԻՄՈՒՄ ՕԳՆԵԱ ԻՆՁ ՏԵՐ

Միշակ *mf*

Ի Գե-ղու - թեան Ի - մում օգ-նեա ինձ տէր,
 Ի յան-ցա - նաց Ի - մոց մաք-րեա զիս տէր,
 Ի Գեճ-գա - ւոր շըր-թանց փըր-կեա զիս տէր.

mf *p*

1. 2.

որ-պէս եր - բե - մըն Յով Գա - նու, եկ ո / ղոր - մեա: //
 որ-պէս եր - բե - մըն ըզ - մաք-սա - ւորն, եկ ո / ղոր - մեա: //
 եկ յա - րե - ցէ ապ - րե - ցո, եկ ո - ղոր - մեա: //

3.

- մեա: .

f

*) Այս շարականը կարելի է կատարել, որպէս նախորդի շարունակութիւն, այդ դեպքում առաջին երկու հնչյունները պետք է կատարել նախորդի վերջին տակտի ֆերմատայի հաշվին:

ՈՂՈՐՄԵԱ ԻՆՁ ԱՍՏԸԻԱԾ: Ի ԼԸՍԵԼ ԸԶ ՉԱՅՆ ՓՈՂՈՅՆ

Միջակ *mf*

Ո - ղոր - մեա ինձ աստը - ւած: Ի ԼԸ-սել ըզ -

mf

- ձայն փո-ղոյն յա - հա-գի՜ն ա - ւուրն, յոր-ժամ հար-կա- նէ

հրեշ-տա-կա-պետն եվ կո-չէ ի դա-տամ - տան, ո - ղոր - մեա

իճճ աստը- ւած: Ի ցըս-տիլ քո յա- տե- ցի դա- տա-ւոր

ա - րեղ, յոր ժամ առ - ցես հրա - փոր-ձու-թեամբ

զքըն-ցու-թիւն-որդ-ւոց մարդ- կան. ո-ղոր մեա իճճ աս-տը - ւած:

ՅԱՄԵՆԱՅՆ ԺԱՄ ԱՂԱԶՆՔԻ ԻՄ ԱՅՍ ԵՆ

Զափավոր

mf

Յա - մե - ցայն ժամ

ա - դա - չանք իմ այս են. ի մե-դաց ի - մոց սուրբ ա - լա - զիս

mf

սեր:

Յան-ցա - ցաց ի -

մոց զար-հու -- ըի սիրտ իմ. ա-ղա-չեմ ըզ քեզ. բող ինձ

տէր: Ար-տաս-ուաց ի -

- մոց մի լը - ուեր տէր. զի պահ-դուխտ եմ ես յաճ-ցա - տոր երկ-

րի:

p *mf* *f*

ՈՂՈՐՄԵԱ ԻՆՁ ԱՍՏՐԻԱԾ, ԶԻ ՔԵԶ ՄԻ ԱՅՆՈՅ ՄԵՂԱՅ

Դանդաղ, հանդիսավոր

ff *m.s.*

mf

Ո - ղոր - մեա ինձ աս - տը - ւած, զի քեզ մի այ - նոյ մե -

p

mf

- ղայ: Ա - ռա - ւել լը-ւա զիս ի տըղ-մոյ յան-

- ցա - ցաց, աղ-բիւր բը - ժը2-կու-թեան, եվ ո - ղոր -

mf

- մեա: Յա - րե - ցէ փըր - կեա զիս, որ հոգ - ւոց եվ

մարմ-նոց ու - ցիս ի2-խա-նու-թիւն, եվ ո-ղոր - մեա:

ԱՆԿԱՆԻՄ ԱՌԱՋԻ ՔՈ

17

Չափավոր

mf

ԱՆ-կա-նիմ ա - ռա - ջի քո եվ խընդ-րեմ

f

զթո-ղու-թիւն յան-ցա-նաց ի - մոց. մի աճ-տես առ-նե՛ր հայր զա-ղա-չա-նըս

mf

իմ: Ա - ղա - ղա - կեմ որ-պէս մաք-սա -

- տրն. եվ հե - ղում զար-տա-սուս իմ ա - ռա - ջի քո որ - պէս պոռ-նիկն.

Երեսմանոյ Դ
ԽՈՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՄ. ԿՈՄԻՏԱՅԱ

Մի անտես առ-ներ հայր զա-ղա-չա-նըս իմ:

mf

Յա-նե - րե - տյո թըշ-նամ - տյո պար-տե - ցայ, եվ ի գաղտ-

- նի նե - տեց բան-սար - կուին վի - րա - տ - րե - ցայ.

Մի անտես առ-ներ հայր զա - ղա - չա-նըս իմ:

ԲԱԶՈՒՄ ԵՆ ՔՈՒ ԳԼԹՈՒԹԻՒՆՔԸ

Միջակ

mf

Բա-զում եմ քո գը - թու-թիւն-քըդ բազ - մա - մեղ ա՜ն -

mf

- ձիւն ի- մոյ.

ո-ղոր - մեա

աս-տը-ւած քա - լիչ

իմ:

*mf*

Զի քեզ ա՜ն-յի -- շա - չար տէր մե-ղայ չա-րիւն խաբ-մամբ.



ո-ղոր - մեա աս-տը-ւած քա - լիչ իմ:

mf

ի քո ի միւս ան - գամ գա-լըս-տեա-նըն յոր ժամ գաս դա - տել զեր-կիր.

ո-ղոր - մեա աս-տը-ւած քա - լիչ իմ:

p

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տեր, որ ի մեջ Լերիցն աղբերացուցեր	6
Վըտանգիմ ի բազմութենե մեղաց իմոց	8
Ի նեղութեան իմում օգնեա ինձ տեր	10
Ողորմեա ինձ աստըւած, ի Լըսել ըզ ձայն փողոյն	11
Յամենայն ժամ աղաչանք իմ այս են	13
Ողորմեա ինձ աստըւած, զի քեզ մի այնոյ մեղայ	15
Անկանիմ առաջի քո	17
Բազում եմ քո գըթութիւնքըդ	19

9—3 2

Խմբագիր՝ Լ. ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ
Ներդրելի՝ Վ. ՄԱՆՊԱԿՈՒՆԵՐ
Գեղ. խմբագիր՝ Օ. ԱՍՏՐԵՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Ա. ՄԱՐՏԻՍՅԱՆ

Վ.Ֆ. 08059

Պատկեր 1513

Տիրամ 1500

Հանձնված է տպագրութեան 30 111 1970 թ.։ Ստորագրված է տպագրութեան 19 XI 1970 թ.։

Թուղթ՝ օֆսետ 60X92 $\frac{1}{2}$ ։ Հրատ. 2,1 մամ.։ տպագր. 3,0 մամ.։ Գինը՝ 22 կ.։

«Հայաստան» հրատարակչութեան, Երևան-9, Տեղեան 91։

ՀԱՍՀ Միներալների տոխտի մամուլի տնտեսական կամիտեի տպիկոնֆարգյունարկութեան
գլխավոր վարչութեան Հանրա Մեդատարտի անվան տպիկոնֆարգյունարկատ, Երևան, Տեղեան 91։